# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ 2801, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Աշոցք համայնք, գ Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2020 թվականի N 132-Ա

## «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 41-Ա որոշմամբ և հիմք ընդունելով աճուրդներ և մրցույթներ կազմակերպող ու անցկացնող Աշոցքի համայնքային հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 16-ի N 6 արձանագրությունը, ***որոշում եմ***.

1. «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով, քառասուն տարի ժամկետով, տարեկան 600000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ-բաժնի տարածքում անմաքս առևտրի խանութ կառուցելու նպատակով, օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Բավրա, Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/5 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապեռության սեփականություն հանդիսացող, 08-0126-0119-0026 կադաստրային ծածկագրով, 0.05653 հեկտար մակերեսով հատուկ նշանակության հողամասը (վկայական N 01092020-08-0018):
2. Պարտավորեցնել «ԱՐՄ-ՀԵԼԻԱ ԴՅՈՒԹԻ ՖՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (տնօրեն՝ Ս. Հակոբյան)՝ Աշոցքի համայնքապետարանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր և դրանից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2020 թվականի հոկտեմբերի 19
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2020 թվականի N 133-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման 2-րդ մասը , ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2020 թվականի բյուջեի հոդվածներում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1. Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

1) բաժին 1, խումբ 3, դաս 3, հոդված 4232՝ «1100.0» թիվը փոխարինել «1065.0» թվով,

2) բաժին 1, խումբ 3, դաս 3, հոդված 4234՝ «150.0» թիվը փոխարինել «185.0» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2020 թվականի հոկտեմբերի 27
գյուղ Աշոցք